

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

ՎԱՀԱՆ ԱՐԹՈՒՐԻ ԲԱՂՂԱՍԱՐՑԱՆ

**ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒ**

**ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման առենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝

Իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Ա.Հ. Խաչատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Իրավաբանական գիտությունների
դոկտոր
Գ.Մ. Բաղիրյան

Իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Ա.Ս. Հայրապետյան

Առաջատար կազմակերպություն՝


ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թվականի դեկտեմբերի 18-ին, ժամը 16:00-ին ՀՀ ԲՈՀ-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում գործող Իրավագիտության 041 մասնագիտական խորհրդի նիստում (0028, ք. Երևան, Կիևյան 8):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2015 թվականի նոյեմբերի 17-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր**



Ա. Հ. Խաչատրյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո երկրի հասարակական կյանքում տեղի ունեցած քաղաքական և սոցիալ-տնտեսական արմատական փոփոխություններն առաջացրին իրավական նոր ինստիտուտների ձևավորման, ամրագրման ու կիրառման անհրաժեշտություն, որոնց միջոցով հնարավոր կլինի սահմանել քրեական վերականգնողական արդարադատության ոլորտում հանցագործությունների և այլ իրավախախտումների դեմ պայքարի գործուն ու համարժեք միջոցներ:

Վերջին տարիներին իրականացվող դատաիրավական բարեփոխումների համատեքստում Հայաստանի Հանրապետության քրեական վերականգնողական արդարադատության համակարգում բավականին էական փոփոխություններ են նախատեսվում կատարել, որոնք առնչվելու են՝ մի կողմից, ազատագրված փոխարեն այլընտրանքային այլ պատժատեսակների կիրառման այնպիսի համակարգի որոնման և ամրապնդման մեջ, որ հանցագործություն կատարած անձը պատիժը կրի առանց հասարակությունից մեկուսացվելու, իսկ, մյուս կողմից՝ իրավախախտում թույլ տված անձի վերասոցիալականացման ու հանցագործությունից տուժած անձանց վնասների վերականգնման համար ստեղծվեն ավելի արդյունավետ երաշխիքներ:

Ընդ որում, համընդհանուր ճանաչում գտավ այն մտտեցումը, որ նշված նպատակին հասնելու կարևորագույն գրավականներից և նախապայմաններից են ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման կառուցակարգերի ներմուծումը և այդ պատիժների կատարումն ապահովող վարչական մարմնի՝ պրոբացիայի ծառայության համակարգի ներդրումն ինքնին ենթադրում է նոր օրենսդրական կարգավորումների կատարման անհրաժեշտություն:

Ժամանակակից աշխարհի առաջադեմ փորձը վկայում է պրոբացիայի ծառայության կարևորության ու անհրաժեշտության մասին: Ազատագրված հետ չկապված այլընտրանքային պատիժների քաղաքակիրթ համակարգի ներդնումը հնարավորություն կտա սահմանել իրավախախտում կատարած անձանց համար այլընտրանքային պատիժների ավելի մարդասիրական և առաջադիմական եղանակներ, ինչպես նաև՝ երաշխավորել պատժի անխուսափելիության սկզբունքի արդյունավետ իրացումը, հնարավորություն տալ ուղղել և վերադաստիարակել առավել ևս ոչ մեծ ծանրության ու միջին ծանրության հանցագործություն կատարած անձին՝ առանց ազատագրված այլընտրանքային պատժի կիրառման միջոցով:

Այս համակարգի ստեղծման հիմնական գրավականներից մեկը հենց Հայաստանի Հանրապետությունում արդարադատության պետական կառավարման համակարգում այդպիսի ծառայության ներդնումն է՝ միջազգային իրավական կարգավորումներով սահմանված չափորոշիչների և միջազգային փորձի հաշվառմամբ:

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայություն դեռևս չի ներդրվել, սակայն, անհրաժեշտ է հաշվի առնել, որ այդ ինստիտուտի ներդրումն առավելապես պայմանավորված է հենց մեր երկրի իրավական

միջավայրի ու ավանդույթների առկայությամբ, որոնք էական ազդեցություն են ունենում ոչ միայն այդ ինստիտուտի ձևավորման և զարգացման, այլև՝ դրա արդյունավետ կիրառման պայմանների վրա:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական բարեփոխումների և սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում արդիական ու հրատապ է դառնում Հայաստանի Հանրապետության քրեական վերականգնողական արդարադատության ոլորտի ազգային օրենսդրության վերլուծությունն ու կատարելագործման ուղիների բացահայտումը և այդ ոլորտի կարևորագույն ինստիտուտներից մեկի՝ պրոբացիայի ծառայության ստեղծումը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է վերը ներկայացված հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

Հետազոտվող թեմայի գիտական մշակվածության աստիճանը. Ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման կառուցակարգերի ներմուծումը և այդ պատիժների կատարումն ապահովող վարչական մարմնի՝ պրոբացիայի ծառայության համակարգի ներդրման իրավական կառուցակարգերը բազմամակարդակ են և պահանջում են մի շարք ոլորտների՝ հանրային ծառայության, զբաղվածության, սոցիալական ապահովության, կրթության, կենսագործունեության և այլն, այնպիսի համապարփակ կարգավորում, որ պրոբացիայի ծառայությունը արդյունավետ ներառվի քրեական վերականգնողական արդարադատության համակարգ:

Ատենախոսության շրջանակներում քննարկված խնդիրների վերաբերյալ բազմակողմանի, համալիր հետազոտություններ հայ իրավագետների կողմից գրեթե չեն իրականացվել: Կատարված ուսումնասիրությունների շարքում, թերևս, կարելի է առանձնացնել Դ. Ավետիսյանի, Ս.Ավետիսյանի, Գ. Ղազինյանի, Ա.Ղուկասյանի, Վ. Հովհաննիսյանի և այլոց ուսումնասիրությունները, որոնցում որոշ չափով անդրադարձ է կատարվում նաև պրոբացիայի և պրոբացիայի ծառայության միայն քրեաիրավական հիմնախնդիրներին կամ դրանց հարակից հարցերի առանձին ասպեկտների լուսաբանմանը:

Միաժամանակ պետք է փաստել, որ սույն ատենախոսությամբ հետազոտության թեման ամբողջովին չի սպառվում, և քննարկվող ոլորտի մի շարք հիմնախնդիրներ հետագա ուսումնասիրությունների կարիք ունեն:

Հետազոտության առարկա հարցադրումները որոշակիորեն ուսումնասիրվել են օտարերկրյա իրավագետների կողմից, սակայն, պրոբացիայի ծառայության իրավական կարգավորման հիմնահարցերի առնչությամբ միանշանակ և համապարփակ մոտեցում այդպես էլ չի ձևավորվել, ավելին, մասնագիտական գրականության շրջանակներում այդ ծառայության սկզբունքների ու գարծառությանի նշանակության բովանդակային սահմանների հիմնահարցն ընդհանրապես չի քննարկվել: Այնուամենայնիվ, պրոբացիայի ծառայության զարգացմանն ու կայացմանը նվիրված են ականավոր գիտնականներ Պ.Բ.Լյուբիսկու, Ա.Ա. Պիոնտովսկու, Ն.Ս. Տագանցևի, Ն.Ս. Տիմաշևի և այլոց աշխատությունները:

Բացի դրանից, քանի որ պրոբացիայի ծառայության կազմակերպման ու գործունեության հիմնախնդիրներն ունեն ընդհանուր աղբյուրներ քրեական և քրեակատարողական իրավունքի հետ, ուստի հետազոտության տեսական հիմք են հանդիսացել նաև այդ ոլորտի հայտնի իրավագետների, մասնավորապես, Ի.Ի. Կարպիցը, Ա.Բ.Զուբկովը, Վ.Ի.Սելիվերստովը, Ն.Ա. Ստրուչկովը, Օ.Վ. Ֆիլիմոնովը, Մ.Դ. Շարգորդսկին և այլոց աշխատանքները: Իսկ ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կատարման և նշանակման ուսումնասիրության մեջ, ավելի ուշ, տեսական և գործնական առումներով, մեծ ավանդ են ներդրել այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Վ.Ֆ. Գուցենկոն, Բ.Ս. Կրիլովը, Գ.Ս. Մերկուրովը, Ն.Ն. Պոլյանսկին, Ն.Ա. Ստրուչկովը, Վ.Ա. Ուտկինը, Վ.Պ. Շուպիլովը և այլոք:

Իսկ Ի.Մ Ազգամովի, Է.Յու. Ասկերովի, Ի.Ա. Բուրլակովայի, Վ.Պ. Ռոմանովայի, Ս.Յու. Սկոբելինի, Ե.Վ. Խրոմիխի, Ե.Ն. Շատանկովայի և այլոց մենագրություններում և ատենախոսություններում հեղինակները դիտարկել են ազատարկման հետ չկապված այլընտրանքային պատիժների և միջոցների կիրառման առանձին հարցեր՝ համադրելով ազգային օրենսդրությունը միջազգային ակտերի և մի շարք արտասահմանյան պետությունների (Անգլիայի, ԱՄՆ, Գերմանիայի, Ֆրանսիայի, Շվեդիայի և այլն օրինակով) օրենսդրությունների հետ:

Հետազոտության թեմային են առնչվում Մ.Ռ. Գետիի, Ն.Վ. Օլխովիկի, Ն.Գ. Օսադչեյի, Ն.Բ. Խոտոռսկայայի և այլոց ատենախոսական աշխատանքները:

Թեմայի առանձին հարցադրումներ բացահայտված են նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2013 թվականի ապրիլի 23-ի ՄԴՈ-1082 որոշմամբ՝ պատիժը այլ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակության համապատասխանության և իրավունքի գերակայության երաշխավորման տեսանկյունից: Միաժամանակ, պրոբացիայի ծառայության իրավական կարգավորման առանձին հարցադրումներ ներկայացված են միջազգային կազմակերպությունների գեկույցներում, բանաձևերում և այլ իրավական փաստաթղթերում:

Հետազոտության օբյեկտ են հանդիսացել Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման կազմակերպաիրավական կառուցակարգերը, ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման և կատարման ներհամակարգային կապերը, ինչպես նաև այն հասարակական հարաբերությունները, որոնք կարող են ձևավորվել միջազգային իրավական չափորոշիչների և պրոբացիայի ծառայության գործունեության միջազգային փորձի իրացման գործընթացում:

Ատենախոսության հետազոտության առարկան են հանդես են գալիս պրոբացիայի ծառայության ներդրման, նրա գործունեության իրավական և կազմակերպչական վարչաիրավական կարգավիճակի վերաբերյալ տեսագործնական պատկերացումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում այդ ինստիտուտի ստեղծման նախադրյալները, կառուցակարգերի պրակտիկան և իրավական կարգավորումներին առնչվող հարցերը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է պրոբացիայի ծառայության գործունեության միջազգային իրավական չափորոշիչների, արտասահմանյան երկրների համապատասխան փորձի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում այդ ծառայության ներդրման հայեցակարգային մոտեցումների ուսումնասիրությունների և վերլուծության հիման վրա բացահայտել ծառայության իրավական հնարավոր կարգավորումների առանձնահատկություններն ու դրանց տրամաբանության լույսի ներքո առաջադրել այդ ծառայության ներդրման առնչությամբ ծագող հիմնախնդիրների այնպիսի լուծումներ, որոնք կնպաստեն՝ մի կողմից, մարդասիրական և առաջադիմական այլընտրանքային պատիժների կիրառմանն ու կատարմանը, իսկ մյուս կողմից, երաշխավորել Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արժեքանության ոգուն համահունչ պատժի անխուսափելիության սկզբունքի արդյունավետ իրացմանը:

Հետազոտությունը լիարժեք և գործնական դարձնելու նկատառումով աշխատությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- հետազոտել պրոբացիայի ծառայության ինստիտուտի բովանդակությունն ու նշանակությունը, ներդրման նախադրյալները և կազմակերպարավական ասպեկտները,

- հետազոտել ու համապարփակ ներկայացնել պրոբացիայի ծառայության իրավաբանական հիմնախնդիրները, բացահայտել այդ ինստիտուտի անհրաժեշտությունն ու նշանակությունը պատմական զարգացումների և միջազգային փորձի ուսումնասիրության համատեքստում,

- վեր հանել պրոբացիայի ծառայության իրավական ապահովման միջազգային իրավական չափորոշիչները և դրանք գնահատել ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և այլընտրանքային այլ միջոցների կիրառման ներպետական կառուցակարգերի ու միջազգային իրավակարգի ապահովման տեսանկյունից,

- վերլուծել Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման հայեցակարգային մոտեցումները և դրանց իրացման հիմնախնդիրները, ներկայացնել օրենսդրական կարգավորումների միջոցով այդ հիմնախնդիրների հաղթահարման ուղիները,

- ուսումնասիրել պրոբացիայի ծառայության մարմինների գործունեության հիմնական սկզբունքները, գործառութային նշանակությունն ու առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում այդ ծառայության իրավական կարգավիճակի հիմնախնդիրների սահմանման ու իրացման տեսանկյունից,

- բացահայտել պրոբացիայի ծառայողի՝ որպես հանրային ծառայողի իրավական կարգավիճակի հիմնախնդիրների ու առանձնահատկությունների տեսագործնական նկարագիրը՝ կատարելով տեսական-իրավական վերլուծություն այդ ծառայողի գործունեության առավել հստակ կազմակերպման, կանոնակարգման և համակարգման առումով,

- մշակել Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայությունը կարգավորող իրավական ակտերի նախագծեր և ներկայացնել այդ գործունեության

ապահովման օրենսդրական ու գործնական լուծումները:

Հետազոտության նորմատիվ-իրավական և փորձառնական հիմքերը.
Հետազոտության համար նորմատիվ-իրավական հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում 2015 թվականի փոփոխությունների նախագիծը, Հայաստանի Հանրապետության քրեական և քրեակատարողական օրենսգրքերը, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և այլ օրենքները, ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից ընդունված «Ազատությունից զրկելու հետ չկապված պատժամիջոցների վերաբերյալ նվազագույն կանոնները», «Ազատագրված դատապարտված կանանց նկատմամբ վերաբերմունքի կամ իրավախախտում կատարած կանանց նկատմամբ կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ կանոնները», «Անչափահասների նկատմամբ իրականացվող արդարադատությանն առնչվող նվազագույն կանոնները» և այլ բանաձևերը, Եվրոպայի Խորհրդի անդամ – պետությունների նախարարների կոմիտեի կողմից ընդունված «Պրոբացիայի մասին Եվրոպայի խորհրդի կանոնների վերաբերյալ», «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների վերաբերյալ» և այլ հանձնարարականները, ինչպես նաև ներպետական, միջազգային ու օտարերկրյա նորմատիվային այլ իրավական ակտերը:

Ատենախոսության ուսումնասիրության տեսական հիմքը հանդիսացել են նաև առանձին գիտնականների աշխատանքները: Միաժամանակ, հայրենական աղբյուրների հետ զուգահեռ ատենախոսությունում օգտագործվել են հետազոտման առարկային առնչվող արտասահմանյան հեղինակների աշխատություններ և տարբեր երկրների (Ավստրիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Նիդեռլանդներ, Լեհաստան, Լիտվա, Ռուսաստանի Դաշնություն, Չեխիա, Շվեդիա, Շվեյցարիա և այլ պետություններ) օրենսդրական ակտեր:

Ատենախոսական աշխատանքում կատարված եզրահանգումների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովվում է հետազոտության թեմայի վերաբերյալ օրենսդրության և մասնագիտական գրականության վերլուծությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման վերաբերյալ գործնական նյութերի ու զեկույցների դիտարկմամբ:

Ատենախոսության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

Հետազոտության գիտական նորույթը նրանում է, որ աշխատանքը հայրենական իրավագիտության մեջ առաջին համակարգված, համակողմանի ուսումնասիրությունն է՝ նվիրված պրոբացիայի ծառայության իրավական կարգավորման հիմնախնդիրներին: Առաջին անգամ փորձ է արվում հետազոտել և առարկայացնել պրոբացիայի ծառայության ինստիտուտը որպես երևույթ Հայաստանի Հանրապետության իրավական իրողություններում՝ տալով համապատասխան հասկացությունների իրավական բնորոշումը, միջազգային փորձի հաշվառմամբ առաջադրվել է եզրահանգում պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետության մասին:

Ելնելով վերոնշյալ խնդիրների ուսումնասիրությունից՝ մշակվել և ներկայացվել են պրոբացիայի ծառայության իրավական կարգավորմանն ուղղված օրենսդրական և գործնական մի շարք առաջարկներ, որոնք կարող են նպաստել Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգի կառավարման բարելավմանը:

Ատենախոսության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ հայրենական իրավագիտության մեջ աշխատանքը համակարգված, համակողմանի առաջին ուսումնասիրությունն է՝ նվիրված պրոբացիայի ծառայության իրավական կարգավորման հիմնախնդիրներին: Փորձ է արվում հետազոտելու և առարկայացնելու պրոբացիայի ծառայության ինստիտուտը Հայաստանի Հանրապետություն՝ տալով հիմնախնդրին վերաբերող հասկացությունների իրավական բնորոշումները: Բացի այդ, միջազգային փորձի հաշվառմամբ առաջադրվել է եզրահանգում պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետության մասին:

Ելնելով վերոնշյալ խնդիրների ուսումնասիրությունից՝ մշակվել և ներկայացվել են պրոբացիայի ծառայության իրավական կարգավորմանն ուղղված օրենսդրական և գործնական մի շարք առաջարկներ, որոնք կարող են նպաստել Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգի կառավարման բարելավմանը:

Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է հեղինակի կողմից պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում.

1. Ատենախոսությունում առաջադրված է այն եզրահանգումը, որ պրոբացիայի ծառայության ներդրման հիմքում ընկած «պրոբացիա» եզրույթի իրավական բովանդակությունն ու նշանակությունն առավելապես պետք է դիտարկել ոչ այնքան որպես պատժի տեսակ կամ քրեաիրավական բնույթի միջոց կամ որպես այլընտրանքային պատժատեսակների ու միջոցների համակցություն, այլև որպես գերատեսչական մարմին՝ պրոբացիայի ծառայությանը օրենքով վերապահված գործառույթ և պրոբացիայի ենթակա անձանց հետ առանձնահատուկ աշխատանք տանելու մեթոդ:

2. Ատենախոսությունում համակարգված տեսքով բացահայտվել են պրոբացիայի ծառայության բնութագրիչները և ներկայացվել դրանց նշանակությունը՝ ա) որպես վարչական մարմնի և պրոբացիայի ենթակա անձանց միջև ծագող հարաբերությունները կարգավորող իրավական ինստիտուտ, բ) որպես հանրային ծառայության մաս կազմող մասնագիտական գործունեության տեսակ, գ) որպես պրոբացիայի ենթակա անձանց վարքագծի վրա ներգործող կառավարող գործունեություն. դ) որպես ուղղակի և գործնական կարգավորիչ տարր:

Ընդհանրացնելով այդ բնութագրիչների բովանդակային նշանակությունը՝ աշխատանքում առաջադրվել է պրոբացիայի ծառայության հետևյալ բնորոշումը. պրոբացիայի ծառայությունը որպես հանրային իրավունքի ինստիտուտ և մասնագիտական գործունեության տեսակ, որը պրոբացիայի ենթակա անձանց համար կանխատեսելի է, ունի ներգործուն ու գիտակցական բնույթ՝ ուղղված այդ անձանց

վարքագծի վերափոխմանը, ուղղմանն ու կրկնակի հանցագործություն կատարելու մղումների նվազեցմանը:

3. Աշխատանքում հիմնավորվել է այն դիրքորոշումը, որ պրոբացիայի ծառայության ինստիտուտի ներդրումը պայմանավորված է պայմանականորեն բաժանված իրավական, մարդասիրական, քաղաքական, տնտեսական, բարոյա-հոգեբանական և ժողովրդագրական նախադրյալներով:

Դրանց համատեքստում ատենախոսությունում հիմնավորվել են պրոբացիայի ծառայության ներդրմանը ներկայացվող կազմակերպարարական պահանջները՝ իրավական, կազմակերպական, գործառնական և քաղաքական-գաղափարական մակարդակներում:

4. Ատենախոսության մեջ վեր են հանվել և գնահատվել են պրոբացիայի ծառայության միջազգային իրավական այնպիսի չափորոշիչներ, որոնք պրոբացիայի ծառայության իրավական ապահովման տեսանկյունից առաջնահերթ նշանակություն կարող են ունենալ ինչպես Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում դրանց ներմուծման, այնպես էլ դրանց՝ ազգային իրավունքում փոխակերպման առումով: Մասնավորապես, հիմնավորված են պրոբացիայի ծառայության խնդիրներին, լիազորություններին, գործառույթներին, ոլորտը կարգավորող իրավական ակտերին ներկայացվող պահանջներին և պրոբացիայի ծառայողի վարքագծի կանոններին, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների գերակայության ու դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորմանը, պրոբացիայի ծառայության օրենսդրական կարգավորմանը, մարդու միջազգային հանրաճանաչ իրավունքների խախտմանն առնչվող պրոբացիայի ենթակա անձանց ցանկացած բողոքի բավարարմանը և այլ հարցերի վերաբերող դատողություններ:

5. Աշխատանքում առաջադրված է այն դիրքորոշումը, որ պրոբացիայի ծառայության առաջնային նպատակը պետք է դիտարկել պրոբացիայի ենթակա անձանց սոցիալական վերաինտեգրումը, իսկ հանցագործությունների նվազումը դիտարկել որպես այդ նպատակի հետևանք:

6. Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ստեղծման գործընթացի համատեքստում կատարվել է այն եզրահանգումը՝ ա) պրոբացիայի ծառայությունը պետական մասնագիտական գործունեության տեսակ է, որը կոչված է ապահովելու պրոբացիայի ծառայությանը օրենքով վերապահված խնդիրների ու գործառույթների իրականացմանը, բ) այդ ծառայությանն առաջնային նշանակություն պետք է տրվի հատկապես սոցիալական վերականգնողական բնույթի այնպիսի խնդիրների լուծման համար, որոնք անմիջականորեն չեն առնչվում քրեական պատիժների իրագործմանը, գ) անհրաժեշտ է որոշել այդ ծառայության լիազորությունների ու գործառույթների շրջանակը պրոբացիայի ծառայության վարչաիրավական բովանդակության և պրոբացիայի քրեաիրավական բովանդակության հարաբերակցության համատեքստում, դ) պրոբացիայի ծառայության սոցիալ-վերականգնողական գործառույթի իրացման պարագայում անհրաժեշտություն

կառաջանա պրոբացիայի ենթակա անձանց նկատմամբ հսկողական և հոգեբանական համալիր միջոցառումների մշակումն ու ներդրումը:

Միաժամանակ, հաշվի առնելով պրոբացիայի ծառայության խնդիրների ընդհանրությունն ու միասնականությունը, ինչպես նաև դրանց բազմազանությունն ու գործունեության ընդգրկուն շրջանակները, առաջադրված է այն եզրահանգումը, որ Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության հնարավոր ներդրման պարագայում այդ ծառայության գործունեության և կազմակերպման ընդհանուր և հատուկ սկզբունքներ կարող են հանդիսանալ օրինականության ապահովման, անկախության, պրոբացիայի ծառայության կառավարման համակարգի միասնականության ու կենտրոնացվածության ընդհանուր սկզբունքները, ինչպես նաև պրոբացիայի ծառայության անհատականացման, պրոբացիայի ենթակա անձանց իրավունքների ու արժանապատվության հարգման, պրոբացիայի ծառայության գործունեության ընթացքում պատժի և ուղղման միջոցների զուգակցման, պրոբացիայի ծառայությունում հրապարակայնության ու գաղտնիության համակցման և խորհրդատվության հատուկ սկզբունքները:

7. Ատենախոսության մեջ առաջադրված է այն եզրահանգումը, որ պրոբացիայի՝ որպես պրոբացիայի ծառայության մարմնի գործառույթի առավելագույնս հստակ սահմանումն ու դրա իրացման երաշխիքները և պետության պոզիտիվ պարտավորությունները պետք է բխեն առնվազն սահմանադրական իրավունքի նորմերի բովանդակությունից, լինեն համաչափ, չաղավաղեն իրավունքի արդյունավետ իրացման սահմաններն ու իմաստը, և զուգակցվեն հանրային իշխանության համարժեք պարտականություններով, ուստի աշխատանքում կատարվել է հետևյալ եզրահանգումը. սահմանադրական բարեփոխումների համատեքստում անհրաժեշտ է ամրագրել պրոբացիայի հաստատման համար անհրաժեշտ և բավարար նախադրյալներ երաշխավորելու հարցը: Մասնավորապես, խոսքը ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը նոր բովանդակությամբ՝ 5-րդ պարբերությունով լրացնելու կամ ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների նախագծի 70-րդ հոդվածը նոր խմբագրությամբ ներկայացնելու մասին է, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ և ՀՀ Սահմանադրության, և ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների նախագծի դրույթների համադրված վերլուծությունից չի բխում ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժներ կատարելու և խափանման այլ միջոցներ կիրառելու որևէ հնարավորություն:

Միաժամանակ, աշխատանքում առաջադրվում է այն եզրահանգումը, որ համակարգային ամբողջականության մեջ պետք է երաշխավորել պրոբացիայի ինստիտուտի և պրոբացիայի ծառայության լիարժեք ներդրումը՝ «Պրոբացիայի մասին» և «Պրոբացիայի ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, ինչպես նաև համակարգային առումով այդ օրենքներին փոխկապակցված այլ օրենքների (Հայաստանի Հանրապետության քրեական, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության և Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքերում, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» և «Քրեակատարողական

ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին) ընդունման միջոցով (Աշխատանքի հավելվածում բերված են համապատասխան ակտերի նախագծերը):

Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ դրանում կատարված վերլուծությունների արդյունքում ստացված եզրահանգումները կարող են օգտագործվել իրավաստեղծ գործունեության բնագավառում «Պրոբացիայի մասին» և «Պրոբացիայի ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, ինչպես նաև այդ օրենքների հետ համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքների կատարելագործման համար, ինչպես նաև պրակտիկ իրավաբանների գործունեության և պետական քաղաքականության իրականացման ընթացքում:

Բացի այդ, աշխատանքը կարող է օգտագործվել նաև մեթոդաբանական, գիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդման համար անհրաժեշտ գրականություն պատրաստելու նպատակով:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության հիմնական դրույթները և եզրահանգումները քննարկվել են Եվրոպական կրթական ակադեմիայի իրավագիտության ամբիոնում, ինչպես նաև ներկայացված են հեղինակի հրատարակած մենագրությունում և չորս գիտական հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կատարված է ՀՀ ԲՈՀ-ի կողմից սահմանված ծավալով, կառուցվածքը համապատասխանում է հետազոտության նպատակներին և խնդիրներին: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, դրանցում ներառված յոթ պարագրաֆներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացված են ատենախոսության նպատակներն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, ատենախոսության նորմատիվ, փորձարարական և մեթոդաբանական հիմքերը, ինչպես նաև համառոտ տեղեկությունն ատենախոսության կառուցվածքի մասին:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Պրոբացիայի ծառայության ներդրման իրավական հիմքերը և նախադրյալները» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից: *Առաջին պարագրաֆում՝ «Պրոբացիայի ծառայության իրավական բովանդակությունն ու նշանակությունը, ներդրման նախադրյալները»* վերտառությամբ, հեղինակը ուսումնասիրել է «պրոբացիա» եզրույթի ծագումնաբանական նշանակությունը և կատարել է եզրահանգում, որ այդ եզրույթը նշանակությունն առավելապես պետք է դիտարկել՝ ոչ այնքան որպես պատժի տեսակ կամ քրեաիրավական բնույթի միջոց կամ որպես այլընտրանքային պատժատեսակների ու միջոցների համակցություն, այլ՝ որպես գերատեսչական մարմնին՝ պրոբացիայի

ծառայությանը օրենքով վերապահված գործառույթ և պրոբացիայի ենթակա անձանց հետ առանձնահատուկ աշխատանքներ տանելու մեթոդ: Այս հիմնավորմամբ պայմանավորված տրվել է հեղինակային բնորոշումը առ այն, որ պրոբացիայի ծառայությունն ընկալվում է որպես հանրային իրավունքի ինստիտուտ և մասնագիտական գործունեության տեսակ, որը պրոբացիայի ենթակա անձանց համար կանխատեսելի է, ունի ներգործուն ու գիտակցական բնույթ՝ ուղղված այդ անձանց վարքագծի վերափոխմանը, ուղղմանն ու կրկնակի հանցագործություն կատարելու մղումների նվազեցմանը:

Երկրորդ ենթագլխում՝ «Պրոբացիայի ծառայության ներդրման հիմնախնդիրները պատմական զարգացումների և միջազգային փորձի ուսումնասիրության համատեքստում» վերտառությամբ, աստենախոսի կողմից հետազոտվում են այդ ինստիտուտի ներդրման հիմնախնդիրները պատմական զարգացումների համատեքստում, ինչպես նաև միջազգային իրավական կարգավորումների և միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքների հաշվառմամբ:

Հեղինակի կարծիքով, տարբեր երկրների օրենսդրական կարգավորումների համեմատական վերլուծության արդյունքները վկայել են պրոբացիայի ծառայության խնդիրների սահմանման հիմքում ընկած են երկու մոտեցումների մասին. ա) այն երկրներում, որտեղ այդ ծառայության գոյությունը դիտարկվում է իբրև հասարակության բնականոն կենսագործունեության ապահովման անհրաժեշտ պայման, ապա կարևորվում է ոչ թե անձի կողմից կատարված արարքի հանրության համար վտանգավորության հիմնահարցը, այլ այն սոցիալական և քրեաձին խնդիրներն ու հանցամասնները, որոնցով պայմանավորված է հենց անձի հանցածին վարքագիծը, բ) իսկ այն երկրներում, որտեղ առանձնակի կարևորվում են ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման հիմնախնդիրները, ապա հատկապես ազգային օրենսդրության մակարդակներում առաջադրվում են պրոբացիայի ծառայությունների կողմից կիրառվող այլընտրանքային պատիժների բազբազան տարբերակներ:

Համադրելով միջազգային փորձը, հեղինակը կատարել է այն եզրահանգումը, որ իրավական տեսանկյունից առկա են ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կիրառման տարբեր ձևեր ու եղանակներ, իսկ պրոբացիայի ծառայությունը նոր ինստիտուտ է, որի գործունեությունն ուղղված պետք է լինի ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատժի՝ որպես յուրահատուկ համերաշխության ու կանխարգելիչ միջոցի կիրառմանը:

Աստենախոսության երկրորդ գլուխը՝ *«Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման հայեցակարգային հիմնախնդիրները միջազգային իրավական չափորոշիչների համատեքստում»* վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից: *Առաջին պարագրաֆում՝ «Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության իրավական ապահովման հիմնախնդիրները միջազգային իրավական չափորոշիչների համատեքստում»* վերտառությամբ, հեղինակի կողմից հետազոտվել են պրոբացիայի ծառայության

իրավական ապահովման համար առանցքային նշանակություն ունեցող միջազգային իրավական ակտերը և վեր են հանվել իրավական չափորոշիչային նշանակություն ունեցող նորմերը:

Առանձնակի կարևորություն է տրվել ՄԱԿ-ի և Եվրոպայի Խորհրդի կողմից ընդունված առանձին ակտերին, մասնավորապես, խոսքը գնում է ՄԱԿ-ի «Ազատությունից զրկելու հետ չկապված պատժամիջոցների վերաբերյալ նվազագույն կանոնների մասին» թիվ 45/111 բանաձևի, Rec(2010)1 «Պրոբացիայի մասին Եվրոպայի խորհրդի կանոնների վերաբերյալ» հանձնարարականի և այլ ակտերի մասին, որոնք, հեղինակի կարծիքով, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգ ներմուծելու կամ ազգային նորմերի փոխակերպելու պարագայում նշանակալից ներգործություն կարող են ունենալ հայրենական օրենսդրության մշակման և դրա գործնական կիրառության կամ կատարելագործման վրա: Միաժամանակ հեղինակը կատարել է եզրահանգում, որ միջազգային իրավունքի և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի փոխգործողության խորացումը, այդ թվում՝ պրոբացիայի ծառայության ոլորտի միջազգայնացմամբ կամ միջազգային իրավական նորմերի պահանջների հաշվառմամբ էլ ավելի է կանխորոշում ազգային օրենսդրության մշակման անհրաժեշտությունը:

Երկրորդ պարագրաֆում՝ **«Պրոբացիայի ծառայության ներդրման հայեցակարգային մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ**, հեղինակի կողմից հետազոտվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի ապրիլի 30-ի N19 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացած Հայաստանի Հանրապետություն պրոբացիոն ծառայության ներդրման հայեցակարգային մոտեցումները:

Կատարված հետազոտության արդյունքում, հեղինակը կատարել է եզրահանգում, որ պրոբացիայի մասին եվրոպական կանոնների և հայեցակարգային դրույթների համադրված վերլուծությամբ պայմանավորված պետք է վերանայել պրոբացիայի ծառայության նպատակի վերաբերյալ հաստատված հայեցակարգային մոտեցումները, և հանցագործություն կատարած անձանց սոցիալական վերաինտեգրումը դիտարկել առաջնային նպատակ, իսկ հանցագործությունների նվազումը՝ որպես այդ նպատակի հետևանք:

Այդ հիմնավորմամբ հեղինակը գտնում է, որ պրոբացիայի ծառայության ինստիտուտի հաստատման համար անհրաժեշտ և բավարար նախադրյալներ են անհրաժեշտ ամրագրելու և երաշխավորելու սահմանադրական և օրենսդրական մակարդակներում: Հեղինակի կողմից ներկայացվում է ՀՀ Սահմանադրությունում և համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքներում համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին առաջարկություններ:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Պրոբացիայի ծառայության իրավական կարգավիճակի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Առաջին պարագրաֆում՝ «Պրոբացիայի ծառայության կազմակերպարավական

հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ, հեղինակն անդրադարձել է Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման կազմակերպչի րավական պահանջներին, որոնք պայմանականորեն դիտարկվել են՝ իրավական, կազմակերպական, գործառնական և քաղաքական-գաղափարական մակարդակներում:

Հեղինակը վեր է հանել այն բնութագրիչները, ըստ որոնց՝ պրոբացիայի ծառայությունը դիտարկվել է՝ որպես իրավական ինստիտուտ և հանրային ծառայության մաս կազմող մասնագիտական գործունեության տեսակ, ինչպես նաև՝ որպես պրոբացիայի ենթակա անձանց վարքագծի վրա ներգործուն կառավարվող գործունեություն. այն ունի առաջնային նշանակություն տվյալ անձանց վարքագծի, գիտակցության և գործունեության վրա կանխատեսելի ու ներգործուն միջոցների կիրառման առումով, որը կնպաստի այդ անձանց վարքագծի վերափոխմանը, ուղղմանն ու կրկնակի հանցագործություն կատարելու մղումների նվազեցմանը:

Ընդհանրացնելով և համադրելով ասվածը, հեղինակը բնութագրել պրոբացիայի ծառայությունը որպես հանրային իրավունքի ինստիտուտ և պետական մասնագիտական գործունեության տեսակ, որը պրոբացիայի ենթակա անձանց համար կանխատեսելի է, ունի ներգործուն ու գիտակցական բնույթ՝ ուղղված այդ անձանց վարքագծի վերափոխմանը, ուղղմանն ու կրկնակի հանցագործություն կատարելու մղումների նվազեցմանը:

Երկրորդ պարագրաֆում՝ «Պրոբացիայի ծառայության մարմինների գործունեության հիմնական սկզբունքներն ու առանձնահատկությունները» վերտառությամբ, հեղինակն անդրադարձել է Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման գործընթացում այդ ծառայության կազմակերպման ու գործունեության այն հիմնական սկզբունքների ու առանձնահատկությունների վերլուծությանը, որոնցից էլնելով ու դրանցով պայմանավորված պետք է գործեն հանրային վարչարարություն իրականացնող այդ մարմինները:

Հետագոտելով մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետները հեղինակը կատարել է եզրահանգում, որ պրոբացիայի ծառայության մարմիններն ունեն իրենց կազմակերպման և գործունեության ինչպես ընդհանուր սկզբունքներ, որոնք բնորոշ են գրեթե բոլոր պետական մարմիններին, այնպես էլ հատուկ սկզբունքներ, որոնք բնորոշ են բացառապես պրոբացիայի գործունեությանը, ընդ որում, անդրադառնալով հատկապես այն սկզբունքներին, որոնք արդիական ու կարևոր են հատկապես մեր երկրի վարչատարածքային կառուցվածքի, ազգային առանձնահատկությունների համատեքստում:

Մասնավորապես, աշխատանքում կարևորություն է տրվել՝ օրինականության ապահովման, անկախության, պրոբացիայի ծառայության կառավարման համակարգի միասնականության ու կենտրոնացվածության ընդհանուր սկզբունքներին, ինչպես նաև՝ պրոբացիայի ծառայության անհատականացման, պրոբացիայի ենթակա անձանց իրավունքների ու արժանապատվության հարգման, պրոբացիայի ծառայության

գործունեության ընթացքում պատժի և ուղղման միջոցների զուգակցման, պրոբացիայի ծառայությունում հրապարակայնության ու զաղտնիության համակցման և խորհրդատվության հատուկ սկզբունքներին և դրանց նշանակությանը:

Երրորդ պարագրաֆում՝ «Պրոբացիայի ծառայողների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները» վերտառությամբ, հեղինակն անդրադարձ է կատարել Հայաստանի Հանրապետությունում համապատասխան օրենսդրական քաղաքականությունը մշակմանը, որն առնչություն կունենա պրոբացիայի ծառայողի իրավական կարգավիճակի սահմանման հետ: Հեղինակի կարծիքով, անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը, որ՝ 1) պրոբացիայի ծառայողի իրավական կարգավիճակի և պրոբացիայի ծառայության սկզբունքների ու կազմակերպման կարգը պետք է ամրագրվեն բացառապես օրենքով, 2) անհրաժեշտ է հաշվի առնել, որ պրոբացիայի ծառայողի գործառնությունը կարող են իրականացնել ինչպես պետական ծառայության ծառայողները, այնպես էլ համապատասխան որակավորում ու թույլտվություն ստացած, ինչպես նաև կամավորության հիման ներգրավված անձինք, 3) պրոբացիայի ծառայողների թվաքանակը՝ ի տարբերություն պետական ծառայության այլ տեսակների ծառայողների, ունի պարբերաբար ավելացման միտում, ինչը պայմանավորված է գործնականում ավանդական դարձած պրոբացիայի ենթակա հանցագործությունների շարունակական աճով, 4) պրոբացիայի ծառայողների հաշվետվողականությունը, նրանց ծառայության արդյունավետության գնահատման մեխանիզմների և գործունեության նկատմամբ գործուն հսկողության պարտադիր պահանջի առկայությունը:

Եզրակացության մեջ հեղինակն ընդհանրացված ներկայացրել է հետազոտության կարևոր հետևությունները, մասնավորապես՝

1. Աշխատության մեջ հանգամանորեն ներկայացված են պրոբացիայի ծառայության բնութագրիչները. դրանք են՝ ա) որպես իրավական ինստիտուտ. խոսքը իրավանորմերի այն համակցության մասին է, որը կոչված է կարգավորելու պրոբացիայի բնագավառում վարչական մարմնի և պրոբացիայի ենթակա անձանց միջև ծագող հարաբերությունները, բ) որպես հանրային ծառայության մաս կազմող մասնագիտական գործունեության տեսակ, ինչը նշանակում է, որ այն ուղղված է պրոբացիայի ծառայության մարմնին օրենսդրությամբ վերապահված խնդիրների և գործառնությունների իրականացմանը, գ) որպես պրոբացիայի ենթակա անձանց վարքագծի վրա ներգործող կառավարող գործունեություն. այն ունի առաջնային նշանակություն տվյալ անձի վարքագծի, գիտակցության և գործունեության վրա կանխատեսելի ու ներգործուն միջոցների կիրառման առումով, որը նպաստում է պրոբացիայի ենթակա անձանց վարքագծի վերափոխմանը, ուղղմանն ու կրկնակի հանցագործություն կատարելու մղումների նվազեցմանը, դ) որպես ուղղակի և գործնական կարգավորիչ տարր, ինչը նշանակում է, որ ցանկացած նորմ ոչ միայն հռչակում, ճանաչում և հաստատում է պրոբացիայի ծառայության նպատակն ու գործունեության ուղղվածությունը, այլև կիրառվում է այդ նպատակների իրագործման համար:

2. Պրոբացիայի ծառայության ինստիտուտի ներդրման առանցքային հիմնախնդիրներից է այդ ծառայության ստեղծման նախադրյալների բացահայտումը: Աշխատության մեջ հանգամանորեն ներկայացված են պայմանականորեն բաժանված իրավական, մարդասիրական, քաղաքական, տնտեսական, բարոյա-հոգեբանական և ժողովրդագրական նախադրյալները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել պրոբացիայի ծառայությունը կարգավորող ազգային օրենսդրություն մշակելիս:

3. Աշխատության մեջ հանգամանորեն ներկայացված են տարբեր երկրներում պրոբացիայի ծառայության օրենսդրական կարգավորումների առանձնահատկությունները: Հաշվի առնելով պրոբացիայի ծառայության ինստիտուցիոնալ կամ օրենսդրական կանոնակարգման հնարավորության ու կարևորության վերաբերյալ միջազգային փորձը՝ կատարվել է եզրահանգումը, որ տարբեր ձևերով պրոբացիայի ծառայության իրավական կարգավորումները չեն փոխում այդ ծառայության բովանդակությունը, նպատակն ու խնդիրները, ինչպես նաև պրոբացիայի ծառայողի իրավական կարգավիճակը:

4. Աշխատանքում պրոբացիայի ծառայության իրավական կարգավիճակի և այդ ծառայության կազմակերպարարական բնույթի գործընթացների վերաբերյալ կատարվել են հետևյալ եզրահանգումները. ա) անհրաժեշտ է սահմանել հանրային այն ոլորտները, որոնց շրջանակներում իրականացվում է պրոբացիայի գործունեություն կամ առնչվում են այդ ծառայությանը, բ) պրոբացիայի ծառայության կազմակերպման, գործունեության կարգն ու երաշխիքները սահմանող օրենսդրություն մշակելիս պետք է հաշվի առնել այդ ոլորտի առանձնահատկությունները, գ) օրենսդրական կարգավորումների միջոցով անհրաժեշտ է սահմանել այդ ծառայության լիազորությունների, նպատակների, խնդիրների, գործառույթների և պատասխանատվության շրջանակներն ու սահմանները, դ) անհրաժեշտ է սահմանել պրոբացիայի ծառայության և պետական այլ մարմինների, կազմակերպությունների ու անձանց միջև փոխհարաբերությունների առանձնահատկությունները, իրավական կարգավորման ոլորտներն ու սահմանները, ե) պրոբացիայի ծառայության գործունեության օբյեկտների և սուբյեկտների, ինչպես նաև այլ գործոնների սահմանումը կարևոր նշանակություն ունեն պրոբացիայի ծառայության կազմակերպման և արդյունավետ գործունեության համար:

5. Աշխատության մեջ անդրադարձ է կատարվում պրոբացիայի ծառայության միջազգային իրավական չափորոշիչների բացահայտմանը, որոնք պրոբացիայի ծառայության իրավական ապահովման տեսակետից առաջնահերթ նշանակություն ունեն ինչպես Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում դրանց ներմուծման, այնպես էլ դրանց՝ ազգային իրավունքի նորմերի փոխակերպման առումով: Խոսքն առաջին հերթին վերաբերում է մարդու իրավունքների և ազատությունների գերակայության ու դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորմանը, ինչն ենթադրում է առանց ազատագրկման այլընտրանքային պետական հարկադրանքի այլ միջոցների կիրառման գաղափարախոսության և պրոբացիայի ծառայության ներդրման արժեքային համակարգի տրամաբանության կապի առկայություն:

6. Հետազոտության առարկայի շրջանակում ընդհանրացնելով պրոբացիայի ներդրման և պրոբացիայի ծառայության գործունեության կազմակերպման միջազգային իրավական չափորոշիչների վերլուծության արդյունքները կատարվել են եզրահանգումներ՝ ա) պրոբացիայի ծառայությանն առաջադրվող խնդիրների

վերաբերյալ, բ) պրոբացիայի ծառայության լիազորությունների վերաբերյալ, գ) պրոբացիայի ծառայությունը կարգավորող իրավական ակտերին ներկայացվող պահանջների մասին, դ) պրոբացիայի ծառայողի վարքագիծը պայմանավորող կանոնների ու դրանց ներկայացվող պահանջների վերաբերյալ:

7. Աշխատության մեջ անդրադարձ կատարելով Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման հայեցակարգային մոտեցումներին՝ առաջադրվում է այն եզրահանգումը, որ համակարգային ամբողջականության մեջ պետք է երաշխավորել պրոբացիայի ինստիտուտի և պրոբացիայի ծառայության լիարժեք ներդրումը «Պրոբացիայի մասին» և «Պրոբացիայի ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, ինչպես նաև այդ օրենքներին համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքների (Հայաստանի Հանրապետության քրեական, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության և Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքերում, ինչպես նաև՝ «Հանրային ծառայության մասին» և «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին) ընդունման և դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով:

Բացի այդ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ պրոբացիայի որպես պրոբացիայի ծառայության գործառույթի առավել հստակ սահմանման ու դրա իրացման երաշխիքները և պետության պոզիտիվ պարտավորությունները պետք է բխեն առնվազն սահմանադրական իրավունքի նորմերի բովանդակությունից, լինեն համաչափ, չաղվաղեն իրավունքի արդյունավետ իրացման սահմաններն ու իմաստը, և գուժակցվեն հանրային իշխանության համարժեք պարտականություններով: Ուստի աշխատանքում կատարվել է հետևյալ եզրահանգումը այն մասին, որ սահմանադրական բարեփոխումների համատեքստում անհրաժեշտ է քննարկել սահմանադրական մակարդակում պրոբացիայի հաստատման համար անհրաժեշտ և բավարար նախադրյալներ ամրագրելու ու երաշխավորելու հարցը: Մասնավորապես, խոսքը ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը նոր բովանդակությամբ՝ 5-րդ պարբերությունով լրացնելու կամ ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների նախագծի 70-րդ հոդվածը նոր խմբագրությամբ ներկայացնելու հարցի մասին է:

8. Հայաստանի Հանրապետությունում պրոբացիոն ծառայության ներդրման հայեցակարգով ամրագրված դրույթների համակարգային վերլուծության արդյունքում՝ աշխատությունում առաջադրված է այն եզրահանգումը, որ անհրաժեշտ է վերանայել պրոբացիայի ծառայության նպատակին առնչվող մոտեցումները, և հանցագործությունն կատարած անձանց սոցիալական վերաինտեգրումը դիտարկել որպես առաջնային նպատակ, իսկ հանցագործությունների նվազումը որպես այդ նպատակի հետևանք:

9. Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման գործընթացի համատեքստում և կատարված վերլուծությունների արդյունքում ընդհանրացված կարգով ներկայացվել են հետևյալ եզրահանգումները ա) պրոբացիայի ծառայությունը պետական մասնագիտական գործունեության տեսակ է, բ) այդ ծառայությանն առաջնային նշանակություն պետք է տրվի հատկապես սոցիալական վերականգնողական բնույթի խնդիրների լուծմանը, գ) անհրաժեշտ է այդ ծառայության լիազորությունների ու գործառույթների շրջանակը որոշել պրոբացիայի ծառայության վարչաիրավական բովանդակության և պրոբացիայի քրեաիրավական բովանդակության

հարաբերակցության համատեքստում, դ) պրոբացիայի ծառայության սոցիալ-վերականգնողական գործառույթի իրացման պարագայում առաջանում է անհրաժեշտություն պրոբացիայի ենթակա անձանց նկատմամբ հսկողական և հոգեբանական համալիր միջոցառումների մշակման ու ներդրման:

10. Աշխատության մեջ հանգամանորեն ներկայացված են պրոբացիայի ծառայության գործունեության և կազմակերպման ընդհանուր և հատուկ սկզբունքների էությունը, բովանդակային նշանակությունն ու առանձնահատկությունները: Մասնավորապես, աշխատանքում կարևորություն է տրվում՝ օրինականության ապահովման, անկախության, պրոբացիայի ծառայության կառավարման համակարգի միասնականության ու կենտրոնացվածության ընդհանուր, ինչպես նաև՝ պրոբացիայի ծառայության անհատականացման, պրոբացիայի ենթակա անձանց իրավունքների ու արժանապատվության հարգման, պրոբացիայի ծառայության գործունեության ընթացքում պատժի և ուղղման միջոցների գույակցման, պրոբացիայի ծառայությունում հրապարակայնության ու գաղտնիության համակցման և խորհրդատվության հատուկ սկզբունքներին:

11. Աշխատության մեջ անդրադարձ է կատարվում պրոբացիայի ծառայողի իրավական կարգավիճակի բովանդակությանը, ինչպես նաև այդ բովանդակության կառուցվածքային տարրերի բնութագրի միջոցով դրա էության բացահայտմանը: Հանգամանորեն ներկայացված են պրոբացիայի ծառայողների որակավորման ու նրանց ծառայության ընդունելու չափանիշների սահմանման հիմնահարցերը, որոնք ունեն գիտագործնական նշանակություն պրոբացիայի ծառայության արդյունավետության ապահովման տեսանկյունից: Հետազոտության արդյունքում առաջադրված է այն եզրահանգումը, որ պրոբացիայի ծառայության ճիշտ և նպատակային կազմակերպման անհրաժեշտությունից էլնելով առաջնային դերակատարությունը պետք է վերապահել պրոբացիայի ծառայողին, նրա հանրային վարքագծի նշանակությանը և այդ բնագավառում հանրային ծառայողական հարաբերությունների իրավական կարգավորումներին:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման հայեցակարգային հիմնախնդիրները, մենագրություն, Եր., 2015, 178 էջ

2. Պրոբացիայի ծառայության ներդրման հիմնախնդիրները պատմական զարգացումների, միջազգային իրավական կարգավորումների և միջազգային փորձի ուսումնասիրության համատեքստում// «Արդարադատություն» գիտական հանդես, 2015թ., թիվ 29, էջ 70-75:

3. Պրոբացիայի ծառայողների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները// Եվրոպական ակադեմիայի գիտական հոդվածների ժողովածու, 2015, էջ 304-315,

4. Պրոբացիայի ծառայության իրավական ապահովման հիմնախնդիրները միջազգային իրավական չափորոշիչների համատեքստում, «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2015թ., թիվ 2, էջ 130-138:

5. Պրոբացիայի ծառայության մարմինների գործունեության հիմնական սկզբունքներն ու առանձնահատկությունները // Եվրոպական ակադեմիայի գիտական հոդվածների ժողովածու, 2015, էջ 316-328,

6. Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման հայեցակարգային մոտեցումները, Արդարադատություն 2015., թիվ 30, էջ54-62:

ВААН АРТУРОВИЧ БАГДАСАРЯН

СЛУЖБА ПРОБАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ: ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ОРГАНИЗАЦИИ И ДЕЯТЕЛЬНОСТИ В КОНТЕКСТЕ МЕЖДУНАРОДНЫХ ПРАВОВЫХ КРИТЕРИЕВ

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 “Публичное право”

Защита диссертации состоится 18 декабря 2015г., в 16:00 часов на заседании специализированного совета ВАК-а 041 по юриспруденции при Академии государственного управления РА (0028, г. Ереван, ул. Киевяна 8)

РЕЗЮМЕ

Актуальность темы диссертации обусловлена обоснованием, что коренные политические и социально-экономические изменения, произошедшие в общественной жизни после обретения независимости Республикой Армения, вызвали необходимость формирования, закрепления и применения новых правовых институтов, посредством которых будет возможно установить действенные и адекватные средства борьбы против преступлений в области уголовно-восстановительной юстиции и других правонарушений.

В контексте осуществляемых в последние годы судебно-правовых реформ в системе уголовно-восстановительной юстиции предусматривается произвести довольно существенные изменения, которые будут связаны, с одной стороны, в поиске и укреплении такой альтернативной системы несения наказания вместо лишения свободы, чтобы лицо, совершившее преступление, несло наказание без изоляции от общества, а, с другой стороны, были бы созданы более эффективные гарантии ресоциализации допустившего правонарушение лица и возмещения ущерба пострадавших от преступления лиц.

Причем, всеобщее признание получил подход, согласно которому важнейшим залогом и предпосылкой достижения указанной цели является введение механизмов применения не связанных с лишением свободы альтернативных наказаний и внедрение административного органа, обеспечивающего выполнение этих наказаний, системы пробационной службы само по себе предполагает необходимость введения нового законодательного урегулирования. Причем, внедрение подобной службы в системе государственного управления юстицией в Республике Армения само по себе предполагает учет требований критериев, установленных международным правовым урегулированием, и международный опыт.

Структура диссертации, имеющая научно-практическое значение, дала возможность автору рассмотреть почти все связанные с темой проблемы. В первой главе автор подробно представил правовые основы и предпосылки внедрения пробационной службы, в частности затрагивая не только проблемы этимологического значения термина «пробация», но и предпосылки правового содержания и внедрения пробационной службы, а также исследование проблем внедрения пробационной службы в контексте исторического развития этой службы и изучения международного опыта.

Во второй главе диссертации автор обратился к изучению проблем и концептуальных подходов к правовому обеспечению внедрения пробационной службы в Республике Армения в контексте международных правовых критериев. Причем, особое значение было уделено отдельным актам, принятым ООН и Советом Европы, в частности, речь идет о Резолюции ООН N 45/111 “О минимальных правилах относительно наказаний, не связанных с лишением свободы”, Res(2010)1 Рекомендации “Относительно правил Совета Европы о пробации” и других актов, которые, по мнению автора, в случае введения в правовую систему Республики Армения или трансформации в национальные нормы могут оказать значительное влияние на разработку отечественного законодательства и его практическое применение или совершенствование.

В третьей главе диссертации исследованы организационно-правовые проблемы пробационной службы в Республике Армения, в том числе особенности правового статуса органов этой службы и правового статуса ее отдельных элементов и служащих пробации.

Основные результаты исследования были отражены в монографии и научных статьях. В то же время автор на основе рассмотрения исторического опыта выдвинул теоретические положения концептуального и практического характера, которые могут быть использованы для усовершенствования современной правовой системы Республики Армения.

Необходимо отметить, что все выводы данной диссертационной работы построены на четких источниковедческих и методологических основах.

Исходя из целей исследования, были выдвинуты некоторые актуальные задачи и представлены авторские замечания и необходимые выводы, которые вытекают из логического хода этого исследования и аргументированы надлежащим образом.

Диссертация имеет научно-ориентированное направление и является аналитическим научным исследованием.

VAHAN BAGHDASARYAN

PROBATION SERVICE IN THE REPUBLIC OF ARMENIA, THE MAIN ISSUES OF ARRANGEMENTS AND LEGAL ACTIONS IN THE CONTEXT OF INTERNATIONAL LEGAL STANDARDS

Dissertation for Ph.D. in Law on the specialization of 12.00.02 “Public Law”

The defence of the dissertation will be held on 18 december 2015, at 16:00, at the session of the specialized council 041 on Jurisprudence SQC RA at the Public Administration Academy of the RA (0028, Yerevan, Kievyan st. 8)

SUMMARY

Actuality of the research: The actuality of the topic is fundamental, whereupon, after the independence of RA, there were the radical political and social-economic changes in the country's social life that have brought forward the necessity of applying legal formations of new legal institutions, through which it will be possible to define the appropriate and effective means against the crime and other offences in the criminal rehabilitation justice sphere.

Judicial-legal reforms implementing over recent years in RA criminal rehabilitation justice system are predicted rather essential changes. They are referring on the one hand to imprisonment, in lieu of other alternative punishments that are supposed to serve the sentence without being isolated from the society, on the other hand the person who breaks the law and their resocialization and the people who suffer will have more effective guarantee.

Therefore, the universal acknowledgment has been received the approach, that the pledge of reaching the mentioned aim and the preconditions are the following; to apply and insert the alternative punishment and it implies in its turn the necessity of new constitutional arrangements. Hence, in the system of judicial management of RA to insert such a service is supposed to take into account criteria defined by judicial arrangements and international experience.

The scientific theoretical significance of the research allows the author to discuss mostly all the problems referring to this issue.

In the first chapter the author elicits the legal basis of probation service investment and prerequisites in detail, putting forward not only the origin of a “probation” term, but also the legal meaning of the probation service and investment preconditions, the research of the probation service investment issues, the historical development of the service in the international experience research context.

In the second chapter of the research the author covers the international legal criteria of RA, the investment service of probation, the legal problems and the main approach study.

Whereupon, the high importance has been given to separate Acts accepted by UN and European Council, specifically, UN Acts “not deprived of freedom minimum rules”, N45/111 resolution Rec. (2010), “European Council’s probation rules “on errands and other acts. In the author’s opinion in case of inserting it in RA legal system or transforming of national norms will have great impact on the local legislation development and practical usage and improvement.

In the third chapter of the research, RA probation service legal arrangement formation issues have been investigated, along with the legal status, different elements, and probation service legal status specification of those service organizations.

Simultaneously, the author studies in details the issues of petition of courts to the constitutional court of given country with preliminary constitutional requests. Besides, the importance of above mentioned authority of the courts (the other state bodies as well) is highlighted as a measure, supporting to the realization of human right to constitutional justice.

In the present work the issues related to the linkage and peculiarities of the institute of review of judicial acts upon new circumstances and the institute of specific constitutional control, conducted based on the individual appeals are especially discussed. In particular the following issues are studied in details: the legal provisions enshrined in the legislation of RA, settled judicial practice, decisions and legal positions of the Constitutional Court of RA, as a result of which existing problematic issues are revealed and possible ways of solution suggested.

A handwritten signature in black ink, consisting of a stylized first letter followed by a series of loops and flourishes.